

Գործարար ակտիվության անկման հետևանքները արտասահմանյան ներդրումների կրճատման համատեքստում

Հայրապետյան Աննա

Հանգուցային բառեր. օտարերկրյա ուղղակի գուտ ներդրումներ, արտաքին առևտրաշրջանառություն, արտահանում, ներդրումային միջավայրի գրավչություն, կապիտալի արտահոսք, մակրոտնտեսական իրավիճակ, ռազմաքաղաքական անկայունություն, տնտեսական անկում

Նախաբան

Համաշխարհային տնտեսության մասշտաբով ներդրումների և տնտեսական ցուցանիշների անկման առումով 2020-2021 թ.թ.-ը կարելի է բնութագրել որպես ճգնաժամային տարիներ: Յուրաքանչյուր պետություն այս կամ այն չափով իր վրա է կրում համաշխարհային տնտեսական ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը: Ուստի համաշխարհային տնտեսության վայրիվերումների պայմաններում առանձնակի կարևորություն են ձեռք բերում երկրների տնտեսական անվտանգության հարցերը, վերանայվում են պետական քաղաքականության, այդ թվում՝ ներդրումային ծրագրերը: Սույն հոդվածը նվիրված է տնտեսական անկման և ներդրումային գործընթացների միջև փոխադարձ կապի ուսումնասիրությանը և առկա իրավիճակում ներդրումային քաղաքականության բարելավման ուղիների առաջարկմանը:

Գործարար ակտիվության վրա ազդող գործոնների ակնարկային բնութագիրը

Որպես կանոն փոքր տնտեսություն ունեցող երկրները զգայուն են ներքին, առավել ևս՝ արտաքին ազդակների հանդեպ: Ուսումնասիրության համար կառանձնացնենք այն ներքին և արտաքին գործոնները, որոնցից յուրաքանչյուրն իր բացասական հետևանքն է թողել Հայաստանի տնտեսության վրա նախորդող տարիների ընթացքում: Որպես արտաքին գործոն՝ կոխտարկենք համաշխարհային տնտեսական անկման միտումները, իսկ որպես ներքին գործոն՝ ներքաղաքական գործընթացները: Արտաքին և ներքին գործոնների սոցիալ-տնտեսական հետևանքները գնահատելու համար որպես տնտեսական ակտիվության/տնտեսական կրճատման չափանիշ վերցրել ենք օտարերկրյա ներդրումների, տնտեսական աճի և արտահանման ցուցանիշները:

Ցանկացած երկրի տնտեսական զարգացման և կայուն աճի հիմնական շարժիչ ուժը ներդրումներն են: Օտարերկրյա ներդրումների ներգրավման և ճիշտ (արդյունավետ, նպատակային) օգտագործման համար պահանջվում է պետական մոտեցում: Պատահական չէ, որ ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծումը կազմում է պետության մակրոտնտեսական քաղաքականության առանցքային հարցերից մեկը և պետք է համապատասխանի տվյալ երկրի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրերին: Մակայն բավական են փոքր տատանումներ, անորոշություն և ռիսկ, որպեսզի երկիրը կորցնի իր ներդրումային գրավչությունը: Թեև Հայաստանը տարիներ շարունակ վարել է ներդրումային «բաց դռների» քաղաքականություն, սակայն իրականությունը ցույց տվեց, որ ռիսկերի ազդեցությամբ չեզոքացվում են նույնիսկ ամենալավ մշակված ներդրումային ծրագրերը: Այս օրինակափությունը բացահայտելու համար դիտարկենք օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքի դինամիկան նախորդող 3 տարիների համար:

Հետազոտության մեթոդաբանությունը

Վերլուծության նպատակով հողվածում կիրառվել է համեմատական հետազոտության մեթոդ՝ բացարձակ և հարաբերական ցուցանիշների նկատմամբ: Ընդհանուր գործարար ակտիվության և մակրոտնտեսական կայունության գնահատման համար հիմք են ընդունվել օտարերկրյա զուտ ներդրումների, տնտեսական աճի, պետական պարտքի, արտաքին առևտրաշրջանառության, մասնավորապես՝ արտահանման ցուցանիշները, ինչպես նաև միջազգային վարկանշավորման համակարգում Հայաստանի զբաղեցրած դիրքը: Վերոնշյալ ցուցանիշների մասով ներկայացվել են հարաբերական և միջին մեծություններ, իսկ վերջիններիս դինամիկան արտացոլելու համար կիրառվել է գրաֆիկական պատկերման մեթոդաբանություն:

Հարաբերական ցուցանիշների վերլուծությունը թույլ է տվել բացահայտել դիտարկվող ցուցանիշների միջև առկա կապերը և ի հայտ բերել ուսումնասիրվող երևույթի դրևորման ու զարգացման միտումները:

Վերլուծություն

Վերլուծության համար որպես ելակետային տվյալներ են հանդիսացել նյութական արտադրության այն ճյուղերը, որոնք մեծ տեսակարար կշիռ ունեն ՀՀ արտահանման կառուցվածքում և ներդրումներ-տնտեսական աճ կապի ուսումնասիրության համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Աղյուսակ 1.

Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը խաշոր ճյուղերի կտրվածքով 2019-2021 թթ. և 2022 թ. առաջին կիսամյակի դրությամբ (մլն դրամ)¹

	2019	2020	2021	2022 հունվար -հունիս
Ընդամենը	56 905,5	-25 229,3	-8 228,4	2 707,3
Հանքարդյունաբերություն	-7 468,8	-7 109,5	-13 914,1	904,5
Մանրի արտադրություն	1 204,8	923,7	31,6	28,1
Խմիչքների արտադրություն	-178,5	1 952,9	908,7	159,7
Շենքերի շինարարություն	-27,6	685,5	-9,7	-8,2
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	-174,8	379,3	188,6	104,8

Օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2019 թ.-ից հետո, մասնավորապես՝ 2020-2021 թթ.-ին օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքն ունեցել է կայուն անկման միտում, 2020-2021 թթ. զուտ հոսքը եղել է բացասական, այսինքն տեղի է ունեցել օտարերկրյա կապիտալի արտահոսք երկրից: Ներդրումային հոսքերը տնտեսության առանձին ճյուղերում դրսևորել են դրական միտումներ, սակայն նվազել է ներդրումների զումարային մեծությունը (աղյուսակ 1):

2020 թ.-ին արձանագրվել է ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված զուտ ներդրումների՝ վերջին 10 տարիների ամենաբացասական ցուցանիշը: Ամենախաշոր դրամական արտահոսքը տեղի է ունեցել մետաղական հանքաքարի արդյունահանման (-21 731.3 մլն դրամ), հիմնական մետաղների արտադրության (-6 488,7 մլն դրամ) և հեռահաղորդակցության (-51 006 մլն դրամ) ոլորտներում: Հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում ներդրումների անկման միտումները պահպանվել են 2021 թ.:


2022 թ. առաջին կիսամյակի դրությամբ նշված բոլոր ճյուղերում նկատվել են ներդրումային հոսքերի դրական միտումներ:

¹ Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ Վիճակագրական կոմիտեի տարեգրքերը:

Մինչև 2022 թ.-ը ուսումնասիրվող ցուցանիշների անկման պատճառները գտնվել են կանխատեսելիության և կայունության անկման տրամաբանության մեջ, քանի որ կապիտալը սիրում է հանգիստ, կանխատեսելի միջավայր: Համավարակը և պատերազմը չէին կարող իրենց հետևանքները չթողնել արտասահմանյան ներդրումների վրա: Արտաքին քաղաքական զարգացումներով պայմանավորված անորոշությունը անխուսափելիորեն պասիվացնում է ներդրումային ծրագրերը և նվազեցնում արտաքին ներդրողների հետաքրքրությունը տվյալ երկրի հանդեպ: Համեմատության համար ասենք, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները նշված ժամանակահատվածին նախորդող տարիների դրությամբ գտնվել են բարձր մակարդակի վրա. ցուցանիշը 2016 թ.-ին կազմել է 81 581,3 մլն դրամ, 2017 թ.-ին՝ 93 043,9: 2018 թ.-ին նվազման տեմպը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է մոտավորապես -20 %: 2019-2021 թթ.-ին արձանագրվել են նվազման հետևյալ տեմպերը՝ -24 %, -117% և -52 %: Եվ որպեսզի ավելի պարզ դառնա, թե ինչ միտումների մասին է խոսքը, նշենք, որ միայն վերջին 3 տարվա ընթացքում օտարերկրյա զուտ ներդրումները կրճատվել են միջին հաշվով մոտավորապես 64 %-ով:

Քանի որ 2020-2021 թթ. ստեղծված իրավիճակի առաջացմանը մեծապես նպաստեցին համավարակն ու պատերազմը, հետևաբար կարելի է ասել, որ ներդրումային հոսքերի նվազման գլխավոր, եթե ոչ միակ պատճառը եղել է Հայաստանում ձևավորված ոչ բարենպաստ ներդրումային միջավայրը: Դրա վառ ապացույցը անկանխատեսելիության պայմաններում ներդրողների վստահության ցածր մակարդակն է: Ուստի, կարելի է ասել, որ ՀՀ-ում բավական բարձր են ներդրումային ռիսկերը, իսկ ներդրումային ոչ արդյունավետ քաղաքականությունը կրում է ինստիտուցիոնալ բնույթ՝ հիմքում ունենալով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Ռիսկի գործոնից բացի ներդրումների կրճատման վրա ազդել է նաև ժամանակի գործոնը: Հայտնի է, որ առանց ռիսկի ու ժամանակի գործոնի պատշաճ գնահատման ոչ մի ներդրումային նախագիծ չի կարող կյանքի կոչվել:

Սակայն պետք է նշել, որ 2021 թ.-ին անկման տեմպերը նվազել են, որոշ ճյուղերում արձանագրվել է կապիտալի ներհոսք: Իսկ 2022 թ. առաջին կիսամյակի դրությամբ կապիտալի ներհոսքը գերազանցել է արտահոսքին, ինչի շնորհիվ գումարային ցուցանիշը (զուտ հոսքը) եղել է դրական: Այնուամենայնիվ, շինարարության ոլորտում ներդրումների ներհոսք չի արձանագրվել, այլ՝ արտահոսք:



Գծապատկեր 1. Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքը 2020-2022 թթ. հունվար-հունիսին խաշոր ճյուղերի կտրվածքով (մլն դրամ)²

Ուղղակի զուտ ներդրումները 2020-2022 թթ. առաջինից երկրորդ եռամսյակների համար կազմել են համապատասխանաբար 311,1 մլն դրամ, 1 362,8 մլն դրամ և 4 554,7 մլն դրամ:

2020 թ. հունվար-հունիսին ուղղակի զուտ ներդրումները նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել են 123 անգամ: 2021 թ. ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ունեցել է աճի միտում. աճել է 4,4 անգամ, իսկ 2022 թ. ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է մոտավորապես 3,3 անգամ: Անկումը և աճը պայմանավորված են եղել համաշխարհային տնտեսական գործընթացներով: Այսպիսով, հետպատերազմյան իրակա-

² Գծապատկերի կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումները:

նության պայմաններում ունեցել ենք զուտ ներդրումների խիստ ցածր մակարդակ՝ 2019 թ. առաջին-երկրորդ եռամսյակի համեմատությամբ: Անկումը կազմել մոտավորապես 70 % (կամ ցուցանիշը նվազել է 15 անգամ):

Կապիտալի ամենամեծ արտահոսքը եղել է հանքարդյունաբերության ոլորտում: Ոլորտի վրա իր բացասական հետևանքն է ունեցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքների տևական խաթարումը 2021 թ. ընթացքում:


Ներդրումային ծրագրերի համատեղ ֆինանսավորման բացակայության հետևանքով մեծ վնասներ են կրում տնտեսության իրական հատվածն ու սոցիալական ոլորտը:

Արժույթի միջազգային հիմնադրամի՝ 2021 թ. ապրիլի 21-ի հաշվետվության մեջ նշվում է, որ 2020 թվականին ՀՀ համախառն ներքին արդյունքը նվազել է 7,6 %-ով [10]: Նույն հաշվետվության մեջ նշվում է նաև, որ ՀՀ պետական պարտքն ավելացել է ն 2020 թ.-ին հասել ՀՆԱ-ի 60 % շեմը: 2022 թ. սեպտեմբերի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի շուրջ 60,2 %-ը:

2020-2022 թթ. որոշակիորեն վատթարացել են նաև բիզնես միջավայրը բնութագրող ցուցանիշները, որոնց գծով Հայաստանը միջազգային վարկանիշային սանդղակում հետընթաց է ունեցել նախորդող մի քանի տարիների համեմատությամբ: Այդ ընթացքում Հայաստանի դիրքը նվազել է 9 կետով՝ գրավելով 47-րդ հորիզոնականը: Այս ցուցանիշը հասանելի է բիզնեսի կարգավորման ուղղությամբ Համաշխարհային բանկի կողմից հրապարակված առնվազն երկու զեկույցներում [9, 4]:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի տարեկան զեկույցների՝ գլոբալ մրցունակության ինդեքսով Հայաստանը 141 երկրների շարքում գրավել է 69-րդ տեղը դիտարկվող ժամանակահատվածի ամենաձգնաժամային փուլում [11, 81]:

Գործարար ակտիվության անկման հետևանքով տուժել է նաև արտահանումը:




Գծապատկեր 2. Արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի դինամիկան՝ ըստ երկրների, 2020-2021 թթ. (մլն ԱՄՆ դոլար)³

ԱՊՀ և ԵՄ պետությունները հանդիսանում են առևտրային հիմնական գործընկեր-երկրները Հայաստանի համար: 2020 թ. արտահանումը նախորդ տարվա համեմատությամբ նշված ուղղություններով կրճատվել է միջինը 17 %-ով, ընդ որում՝ դեպի ԵՄ երկրներ արտահանումն ավելի մեծ չափերով է կրճատվել (25,8 %): Դեպի ԱՊՀ երկրներ արտահանման ծավալների կրճատումը կազմել է 8,5 %:

2021 թ. և 2022 թ. հունվար-հունիս ամիսների արտահանման ցուցանիշները նշված ուղղություններով ունեցել են աճի միտում:

³ Գծապատկերի կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումները:



Գծապատկեր 3. 2020-2022 թթ. առաջին-երկրորդ եռամսյակների արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքի դինամիկան՝ ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար)⁴

Այսպիսով, համեմատելով 2021-2022 թթ. ցուցանիշները, կարելի է ասել, որ 2020 թ.-ը բնութագրվել է անկումնային նաև արտաքին առևտրաշրջանառության տեսանկյունից. մասնավորապես արտահանման տեմպերի անկում է արձանագրվել ԱՊՀ և ԵՄ երկրների ուղղությամբ: Նախորդ տարվա համեմատությամբ անկումը նշված ուղղություններով կազմել է համապատասխանաբար 18 % և 21 %, ինչը հանդիսանում է գործարար ակտիվության անկման ևս մեկ կարևոր ցուցիչ: Այդուհանդերձ, հաջորդող տարիներին նկատվել է որոշակի աշխուժացում արտաքին առևտրաշրջանառության ոլորտում:

⁴ Գծապատկերը կառուցվել է ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակումների հիման վրա:

Եզրակացություն

Այսպիսով, ընդհանրացնելով ներդրումային և գործարար միջավայրերում առկա հիմնախնդիրներն ու բացասական միտումները, կարելի է արձանագրել հետևյալը.

1. Տեղի է ունեցել օտարերկրյա ներդրումների կտրուկ անկում, կապիտալի փախուստ Հայաստանի Հանրապետությունից:
2. Նվազել է ներդրումային միջավայրի գրավչությունը: Ներդրումների կրճատման վրա մեծ ազդեցություն է ունեցել երկրի ներքաղաքական իրավիճակի փոփոխությունը, այնուհետև՝ համավարակը և պատերազմը:
3. Մեծացել է գործարարների անորոշությունը Հայաստանի հետ կապված, ավելին՝ շատ գործարարներ հեռանկար չեն տեսնում Հայաստանում: Տվյալ դեպքում հաճախ հետաձգվում են ներդրումային նախագծերը:
4. Քաղաքական և ռազմաքաղաքական անկայունության հետևանքով նվազել է Հայաստանի վարկն ու հեղինակությունը, գործարար աշխարհում՝ մրցակցային առավելությունները:
5. Քաղաքական և ռազմաքաղաքական անկայունության հետևանքով Հայաստանը հայտնվել է ռիսկային երկրների շարքում: Բիզնես միջավայրի գնահատման չափանիշներով Հայաստանը գտնվում է «B» դասի ռիսկային խմբում: Վերջինս ընդհանուր գծերով բնութագրվում է որպես բարձր ռիսկային կամ որպես ցածր վարկանիշ: Շեշտենք, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ներդրումային ռիսկին [7]:
6. Բացակայում են ներդրումների խթանման գործուն պետական ծրագրերը:

Նշենք, որ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումները կարգավորվում են 1994 թ.-ին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով: ՀՀ ներդրումային քաղաքականության հիմնադրույթներն ամրագրված են 2015 թ.-ին ընդունված ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգում, որով ստեղծվել են ներդրումային հարաբերությունների ազատականացման, ներդրումների պաշտպանության, օտարերկրյա ներդրողների համար բարենպաստ ռեժիմի ապահովման, այն է՝ ներդրողների իրավունքների, օրինական շահերի և գույքի պաշտպանության հիմքեր: Սակայն օրենսդրական բարեփոխումների ուղղությամբ գործնական քայլեր չեն արվել վերջին տարիներին: Այս հանգամանքը նույնպես ներդրումային արդյունավետ քաղաքականության բացթողումներից է:

Առկա բացթողումների և հիմնախնդիրների ուղղությամբ անհրաժեշտ են

1. Առաջին հերթին ներդրողների համար ապահովել կանխատեսելիության մթնոլորտ՝ ներդրումային միջավայրի քաղաքական բաղադրիչի միջոցով: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ռազմաքաղաքական կայունություն:
2. Քաղաքական կայունությունից ոչ պակաս կարևոր է տնտեսական կայունությունը, տնտեսության «խաղի կանոնների» հստակությունը, մրցակցային դաշտը, գների, փոխարժեքի կայունությունը, բարենպաստ հարկային, մաքսային օրենսդրությունը, պետության տնտեսական օժանդակությունը, ցածր վարչարարությունը, վարկային և այլ ֆինանսական արտոնությունները:
3. Բարենպաստ իրավական դաշտը, այն է՝ ներդրողների իրավունքների պաշտպանությունը, պետական աջակցությունը, օրենքի գերակայությունը: Այս հարցը պահանջում է ինստիտուցիոնալ և օրենսդրական լուծումներ, այլ կերպ ասած՝ պետության «բարի կամք»: Նշենք, որ օտարերկրյա ներդրումների պաշտպանության պետական երաշխիքներ ներկայումս չկան Հայաստանում, այդ թվում՝ ներդրողի օգտին վեճերի լուծման ինստիտուտներ և մեխանիզմներ:
4. Ներդրումային միջավայրի գրավչության մեծացման նպատակով կարևորում ենք ներդրումային ռազմավարության ընդունումը, որը թույլ կտա վեր հանել ներդրումների առաջնահերթ ոլորտները՝ ելնելով ճյուղերի ռազմավարական նշանակությունից և ներդրումային հոսքերն ուղղորդել դեպի այդ ոլորտներ:
5. Անհրաժեշտ է ստեղծել ազգային վենչուրային հիմնադրամ՝ ստարտափների ֆինանսավորման նպատակով:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-հունիսին, էջ 129-132,
https://armstat.am/file/article/sv_06_20a_411.pdf
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 137-138,
https://armstat.am/file/article/sv_12_20a_411.pdf

3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-հունիսին, էջ 123-124,
https://armstat.am/file/article/sv_06_21a_411.pdf
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 134-135,
https://armstat.am/file/article/sv_12_21a_411.pdf
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հունիսին, էջ 136-140,
https://armstat.am/file/article/sv_06_22a_411.pdf
6. Օտարերկրյա ներդրումները 2022 թվականի հունվար-փետրվարին, էջ 92-93,
https://www.armstat.am/file/article/sv_02_22a_420.pdf
7. Coface for Trade, Comparative Table of Country Assessments,
[https://www.coface.com/Economic-Studies-and-Country-Risks/Comparative-table-of-country-assessments/\(geo\)/3509/\(bca\)/207](https://www.coface.com/Economic-Studies-and-Country-Risks/Comparative-table-of-country-assessments/(geo)/3509/(bca)/207)
8. Doing Business 2020, Comparing Business Regulation in 190 Economies, World Bank Group, p. 4,
<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/32436/9781464814402.pdf>
9. Doing Business 2021, Comparing Business Regulation in 190 Economies, World Bank Group, p. 4,
<https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf>
10. IMF Staff Concludes Visit to Republic of Armenia, Press Release No. 21/111, <https://www.imf.org/en/News/Articles/2021/04/21/pr21111-armenia-imf-staff-concludes-visit-to-republic-of-armenia>
11. The Global Competitiveness Report, Special Edition 2020, Klaus Schwab, World Economic Forum p. 81,
http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2020.pdf
12. The World Bank Data on Measuring Business Regulations, Ease of Doing Business in Armenia,
<https://www.doingbusiness.org/en/data/exploreconomies/armenia>

Последствия сокращения деловой активности в контексте сокращения иностранных инвестиций

Айрапетян Анна

Резюме

Ключевые слова: прямые иностранные инвестиции, внешняя торговля, экспорт, инвестиционная привлекательность, отток капитала, макроэкономическая ситуация, военно-политическая нестабильность, экономический спад

В данной статье рассматриваются последствия глобального экономического спада, эпидемии, войны на макроэкономическую стабильность Республики Армения, деловую активность и на национальную экономику Республики Армения в целом. С целью выявления негативных тенденций были изучены показатели инвестиций, экономического роста, государственного долга, в том числе внешнего долга, а также международной торговли. По средним оценкам, за последние 3-4 года инвестиции в Армению сократились, отток капитала из страны, сократился экспорт, увеличился государственный долг, а основной макроэкономический показатель, по данным международных организаций, имеет тенденцию к снижению в 2020, т.е. был не экономический рост, а экономический спад. По расчетам тех же международных структур, государственный долг РА превысил установленный допустимый порог, в результате чего Армения оказалась в группе рискованных стран.

Отчеты, опубликованные Всемирным банком по регулированию бизнеса, свидетельствуют о том, что в 2020г. ухудшились показатели, характеризующие бизнес-среду, по которым Армения отстала в международной рейтинговой шкале по сравнению с предыдущими 4 годами. За это время позиция Армении снизилась на 9 пунктов.

Согласно годовому отчету Всемирного экономического форума, в указанный период в Армении также наблюдалось снижение индекса глобальной конкурентоспособности.

Проблемы и негативные тенденции, представленные в работе, носили институциональный характер, и были внесены несколько предложений по их преодолению.

The Consequences of Decline in Business Activity in the Context of Foreign Investment Reduction

Hayrapetyan Anna

Summary

Key words: *foreign direct investment, foreign trade, exports, investment attractiveness, capital outflow, macroeconomic situation, military-political instability, economic downturn*

This article discusses the effects of the global economic downturn, epidemic and war on the macroeconomic stability of the Republic of Armenia, its business activity, and the national economy of the Republic of Armenia in general. The indicators of investments, economic growth, state debt, including foreign debt, as well as international trade were studied in order to reveal the negative tendencies. According to average estimates, over the last 3-4 years, investments in Armenia have decreased, capital outflow from the country, exports have decreased, public debt has increased, and the main macroeconomic indicator, according to international organizations, tends to decrease in 2020, i.e. it was not an economic growth, but economic recession. According to the calculations of the same international structures, the state debt of the Republic of Armenia exceeded the established permissible threshold, as a result of which Armenia found itself in the group of risky countries.

Reports published by the World Bank on business regulation demonstrate that in 2020, indicators characterizing the business environment have deteriorated, in terms of which Armenia has fallen behind in the international rating scale compared to the previous 4 years. During that time, the position of Armenia decreased by 9 points.

According to the annual report of the World Economic Forum, Armenia also had a decline in the global competitiveness index during the mentioned period.

The problems and negative tendencies presented in this article were of an institutional nature, and several suggestions were made to overcome them.

Ներկայացվել է 29.08.2022 թ.

Գրախոսվել է 29.09.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.